

ԼԵԶՈՒՍԳՐԻՏԱԿԱՆ

ԿԱՍԻՍԵՐԷՆԻ, ԹՐԱԿԵՐԷՆԻ, ՓՈԽԻԳԵՐԷՆԻ
ՆԻ ԵՒ ՓՈՔՐ-ԱՍԻԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ
ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅՑ^(*)

Առաջին հարցը՝ որ ներկայանում է մեր առաջ, հետևեալն է. եթէ նախահայերը գաղթելով հնդեւրոպական նախահայրենիքից եկան վերջապէս հաստատուելու Հայաստանում, ո՞ր ճանապարհով եկան, և իրենց ճանապարհին ո՞ր ժողովուրդների հետ յարաբերութիւն ունեցան:

Նախահայրենիքից մինչև Հայաստան երկու ճանապարհ կայ. մէկը Սև ծովի արևմտեան եզրերքներով, արդի Ռումանիայով իջնում է դէպի հարաւ, մտնում է Թրակիա, Հելլէսպոնտոսի վրայով անցնում է Փոքր-Ասիա և ուղիղ դէպի արեւելք դիմելով՝ Փոքր-Հայքի միջով մտնում է Հայաստան: Երկրորդը Սև ծովի հիւսիսային կողմով և հարաւային Ռուսաստանի տափաստաններով հասնում է մինչև Հիւսիսային Կովկաս, այնտեղից ճեղքում է կովկասեան լեռնաշղթան, և կասպից ծովի արևմտեան եզրերքներով իջնում է վերջապէս Հայաստան: Զանազան տուեալներ հաստատում են որ նախահայոց գաղթը եղել է առաջին ճանապարհով. նախ՝ որովհետև երկրորդ ճանապարհը բռնել էին Արևական ցեղերը՝ որոնց հետ հայերէնը առանձին կապակցութիւն չուներ: Երկրորդ՝ որովհետև հին յոյն պատմիչները աւանդաբար պատմում են մեզ թէ հայերը ուրիշ ցեղերի հետ Եւրոպայից գաղթել են Փոքր Ասիա, և վերջապէս կայ պատմական յիշատակութիւն թէ արդի հայերը (արմէնները) Ն. Ք. Ե. - 2. դարերին բնակուելիս են եղել արդի Փոքր-Հայքում (Հերոդոտոս, Ե. 49, 52), Ալիսի ակունքներից արևմուտք, Կիլիկիոյ և Մատիանացոց միջև, և իրենցից դէպի հիւսիս և արեւելք բնակւում էին Սասպիրները և Ալարոդները: Այս ամբողջ ճանապարհի վրայ կան Ար-

մենիա անունով վայրեր: Թեոալիալում Բոյքէյս լճի մօտ կար Սրմենիոն քաղաքը (Ստրաբոն ԺԱ.), Թեոալիալում կար Նոյնպէս Օրմենիոն քաղաքը (Իլիական Բ. 2, 734), որ և Օրմենիոն (Ստրաբոն Թ.), Բիւթանիալում կար Որմենիոն լիւր, Սինսպի մօտ կար Արմենէ նաւահանգիստը, Ալիսի ակունքի մօտ կար Արմենիոն լիւր:

Պատմութիւնը տալիս է մեզ բազմաթիւ ժողովուրդների անուններ, որոնք բնակուելիս են եղել արեւելեան Եւրոպայից մինչև Փոքր-Հայք փոռած ընդարձակ ճանապարհի վրայ՝ այն հնազոյն ժամանակներում:

Առաջին և զլխաւոր ժողովուրդն էին Թրակացիք, որոնք բնակւում էին արդի հարաւային Սլաւոնական երկիրներում, այն է Դանուբի հովտում. նրանց սահմանն էր մի կողմից ծովը և միւս կողմից Մակեդոնիոյ լեռները, իսկ զլխաւոր բնակավայրը արդի Ռումանիան: Հարաւում՝ արդի Յունաստանում բնակւում էին Պելասգները, Կրետէում կար մի առանձին ժողովուրդ՝ որ հառել էր քաղաքակրթութեան մեծ աստիճանի և ծանօթ է Կրետացի անունով: Փոքր-Ասիայում, արևմտեան կողմում բնակւում էին Կարիացիք, Լիւդիացիք, Միսիացիք, Տրոյադացիք, հիւսիսային կողմում՝ Բիւթանացիք, Պափլագոնիացիք և Պոնտացիք, հարաւում՝ Լիւկիացիք, Պամփիլիացիք, Իսաւրիացիք և Կիլիկիացիք (հաթեր), միջին մասում՝ Պիսիդիացիք, Փաւլագիք, Լիկայոնացիք և Կապադովկիացիք:

Այս ժողովուրդների ծագման և ցեղակցութեան մասին զանազան հակասական կարծիքներ կան. յոյն պատմիչները (Հերոդոտոս և այլն) պատմում են թէ Փոնագացիք նախապէս բնակւում էին Եւրոպայում, ուր կրում էին Բրիգէս անունը իրենց ցեղակից Թրակացոց հետ, և աւելի յետոյ Հելլէսպոնտոսի վրայով անցան Փոքր-Ասիա և հնազհատ աւելի ներս յառաջացան: Փոնագացոց լեզուով գտնուած մնացորդները ցոյց են տալիս որ այդ ցեղը իրօք հնդեւրոպական է: Այս հարցով զբաղուել են յատկապէս Թոմաշէկ՝ «Տիւ ալտի Թրագը», և Կրեյմեր՝ «Այնլայթունկ ին դի Գեշիխտէ դեռ գրիխիշն Նյարթէ» (1896), որոնք դրուում են թէ Փոնագիացիք և Թրակիացիք

(*) Վերցւած՝ մեծամուն հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործէն (Ե. Դյուլս):

Փոքր-Ասիական ուրիշ ազգութիւնների հետ (ինչպէս Թիւրքացիք, Բիւթանացիք, Տրոփաղացիք և այլն) կազմում են մի առանձին ճիւղ հնդեւրոպական լեզուախմբի մէջ:

Պիւստուկները նախալուծական քննիչներն էին և պատկանում էին ոչ հնդեւրոպական մի ցեղի, որ յետոյ յունաց տիրապետութեան և քաղաքակրթութեան ազդեցութեամբ ոչնչացաւ: Նրանց ցեղակից, յամենայն դէպս ոչ հնդեւրոպական մի ժողովուրդ էին նաև Կրետացիք, որոնց գաղթական հատուածներն էին ըստ Հերոդոտոսի՝ Լիւկիացիք և Կարիացիք: Այս երկուսին ցեղակից էին նաև Միսիացիք և Լիւգիացիք: Թէ՛ այս և թէ՛ միւս ցեղերի ծագման մասին լաւագոյն փաստերը պիտի գտնէինք լեզուական մնացորդների մէջ: Բայց դրանք այնքան քիչ և աննշան են, երբեմն էլ բոլորովին անյայտ, որ անկարելի է դրանց քննութեամբ որ և է եզրակացութեան յանգիլ: Կրեշմեր, իր վերոյիշեալ աշխատութեան մէջ այս երկրորդ խմբի լեզուները միացնելով իրար հետ՝ համարում է մի ծագումից որ կոչում է Փոքր-Ասիական (ոչ հնդեւրոպական): Հիմայ սովորութիւն է կոչել Ասիական: Ընդհակառակը Բուզգէ (Լիւկիշէ շտուգիւրն, հտ. Ա. 1897, Բ. 1901) գտնում է որ տրււած փաստերը անբաւարար են և թէ այդ լեզուները աւելի մերձաւոր են հայերէնի և հետեւաբար հնդեւրոպական են:

Ահա այն ժողովուրդները, որոնց հետ հայերը այսպէս թէ այնպէս յարաբերութեան մէջ մտած պիտի լինէին, նախքան Հայաստան հասնելը: Այժմ պէտք է քննել թէ նախահայերը Եւրոպայից մեկնելիս մենա՞կ են դուրս եկել, թէ վերոյիշեալ ժողովուրդներից մէկի կամ մի քանիսի հետ՝ ինչպէս պարսիկները հնդիկներին հետ, կամ իտալական ժողովուրդները կիտերի հետ), որոնք մնալով ճանապարհի այս ու այն կողմում, ասպարէզ տուին հայերին իբրև յառաջընթաց խմբի, թափանցելու մինչև Հայաստան: Քննել այս հարցը նշանակում է միաժամանակ քննել թէ ինչ ցեղակցական կապ կայ հայերի և վերոյիշեալ ժողովուրդների, կամ որ նոյն է, հայերէնի և նրանց լեզուների միջև:

Յոյն մատենագիրներից Հերոդոտոս և Եւգոկարիոս հայերին համարում են Փոխ-

գիական սերունդ կամ հատուած, և լեզուով էլ նոյն կամ նման: Հերոդոտոս իր Պատմութեան մէջ (Է. 73) հայերին կոչում է Փրիւգոն ապոյկոյ՝ հատուածք փոխաբայացոյ: Իսկ Եւգոկարիոս իր Աշխարհագրութեան մէջ ասում է թէ «Հայք սերունդք են Փոխաբացոց և լեզուաւ բազմօք փոխաբէն խօսին» (= Արմենիոյ գե տո մեն գենոս էկ Փրիւգիոս կայ տե Փոնէ պոլլա Փրիւգիւգոսի): Նոր քննիչներից Կրեշմեր իր վերոյիշեալ աշխատութեան մէջ, էջ 208, և Մեյեր, «Գեշիխթէ գեա ալտերտումս» 1893, հտ. Բ. էջ 41, 58, գտնում են որ հայերը Թրակացոց ու Փոխաբացոց հետ կազմում են մի ցեղ, նախապէս բնակուած էին Թեսալիոյ հիւսիսային կողմում, խօսում էին փոխգերէնի ազգական մի լեզու, և Ն. Բ. երրորդ հազարամեակին փոխգական ցեղերի հետ Փոքր-Ասիա անցան և Փոքր-Ասիոյ հիւսիսային մասերով (Բիւթանիա և այլն) անցնելով եկան Հայաստան: Բուզգէ (Լիւկիշէ շտուգիւրն) աւելի մեծացրեց խընդիրը և բոլոր Փոքր-Ասիական լեզուները հայերէնի մերձաւոր, հետեւաբար հնդեւրոպական և ցեղակից դուրս բերաւ: Վերջապէս Ենսէն (Հիթիթեր ունդ արմենրը Շտրասբուրգ, 1898) կարդալով Հաթիւրի թողած զանազան պատկերազիր արձանագրութիւնները, որոնց բանալին անյայտ էր, հետեցրեց թէ հաթիւրը նախահայերն են, թէ նոյնիսկ այդ երկու անունները միևնոյն բառերն են և թէ հաթ-հայերը Եւրոպայից դուրս գալուց յետոյ՝ երկար ժամանակ բնակուել են Կիլիկիայում, հիմնել են այնտեղ սեփական կուլտուրա, գիր ու գրքականութիւն, որից յետոյ անցել են հաստատուելու արգի Հայաստանում:

Փոխգ-հայկական ցեղակցութեան մասին խօսում են նաև Հիւբշման, Մեյլէ, Տաշեան և Մարքլարդ: Հիւբշման KZ 23, 1877, էջ 48-49, խօսելով հայ-փոխգական նմանութեանց վրայ, տատանւում է վճիռ տալ, թէ և հակամէտ է ընդունելու թէ փոխգացիք և հայերը մօտիկ ազգական էին և միւս Փոքր-Ասիական լեզուների հետ մի ընտանիք էին կազմում: Նոյն հեղինակը հայերէն քերական. 1, 405-6, գրւում է որ Փոխգերէնից մանաւանդ թրակերէնից մեզ հասած բառերը այնքան քիչ և աննշան են, որ կարելի չէ դրանց

վրայ հիմնուելով հայերէնի ցեղակցութեան մասին դրական վճիռ դուրս բերել. ուրիշ խօսքով եղածը ոչինչ չի առում: Մեյլէ իր քերականութեան ուրուագծի մէջ, էջ ԺԳ. և Կենտրոնական Ասիայում գտնուած նոր հնդեւրոպական լեզուներ աշխատութեան մէջ, Փարիզ 1912, էջ 7, ասում է թէ առանց վճռական պատճառների համեմատում են հայերէնը փոխզերէնի հետ, որ հազիւ ծանօթ է: Տաշեան, Ուսումն. դասական հայերէն լեզուի Ա. էջ 123-173 քրննութեան առնելով մեզ աւանդուած թրակերէն և փոխզերէն բառերը և համեմատելով հայերէնի հետ, գտնում է որ այդ երեքը մէկ ճիւղ համարելու բնաւ հիմք չկայ: Թրակերէն և փոխզերէն բառերը աւելի նման են յունարէնի կամ արիական լեզուներին, քան թէ հայերէնի: Մարք. վարդ, Դի ենաշխհունդ, էջ 4, ասում է որ թէ և հնագոյն հայերէն յիշատակարանների և փոխզերէնի միջև 12 դարերի հեռաւորութիւն կայ, բայց և այնպէս բնաւ նմանութիւն չկայ հայերէն և փոխզերէն լեզուների միջև:

Հարցի լուծումը կախուած լինելով հայերէն, փոխզերէն և թրակերէն բառերի համեմատութիւնից, որի վրայ հիմնուել են նաև նախորդ քննիչներն, ասոնք այստեղ մի խումբ թրակերէն ու փոխզերէն բառերի ցանկը.

Թրակ. լրիւ = հաղալ	Փոխզ. գերիւ = ցերիւ
լինել = կաղել	գլտաւ = էտը
լուստ = զարեշուր	գլուրա = ոսկի
լրիւ լիւտ = կլրաւ	զարդաւ = հաղալ
կիլա = աւան	դաւա = զայլ
նեյրաւ = ուլ	եհիս = ռզնի
նիսաւ = նիմաւ	եթի = եւս
պիւն = գարեջուր	գերկիւ = կոյտմբ
սկալմ = դանակ	գեմել = երկիր
Փոխզ. պրբեթ = բերե	գեմաւ = աղբիւր
աղեհ = մորու	խա = ալ որ
արման = կոխ	կէ = եւ
Բազայաւ = Աստուծ	մալիւ = գեղեցիկ
անար = մարդ	նոու = վերել
բոնի = կիմ	սեմաւ = սմին
լպիւն = բազաւ	մասար = մայր
բեղու = ջուր	կնոււմաւ = լիւսաս-
գալարաւ = ելբոր կիմ	կարաւ

Ահա մի փոքր արձանագրութիւն ևս փոխզերէն լեզուով.

Իսս ճի սեմաւ կնոււմաւ կալուս աղակեթ, եթեթեթիկ-մեթաւ էիսաւ = Ով որ սմին գերեզմանին վնաս կտայ, անթեթալ լինի:

Ինչպէս տեսնում ենք, այս բոլոր բառերի և նրանց հայերէն համանիշների մէջ ոչ մի նմանութիւն չկայ. բառերի մեծ մասը ակներե կերպով հնդեւրոպական են, բայց կապուած են ուրիշ լեզուների հետ և ոչ հայերէնի. ինչպէս՝ Էեղու = ուու, վաղա, կի = լա. քէ, յն. կայ, գորդու = ոուս. գորդ, բենդ = գերմ. բինդեն և այլն: Հայերէնի չափազանց նման է սեմաւ = սմին, բայց այսքանը բաւական չէ ընդունելու համար երկուսի մէջ անձուկ ցեղակցութիւն:

Ասկայն յոյն պատմագիրների վկայութիւնները չափազանց սրու են թրակի-փոխզերէնի և հայկական ցեղակցութեան համար, որի կողմն են նաև Արմէն ձեռն գանձալան տեղական անուններ թրակիւյում, Փոխզերէնում և Փոքր-Ասիոյ հիւսիս-սային մասերում: Ուստի հաշտեցնելու համար յոյն մատենագիրների տուեալները իրականութեան հետ՝ կարող ենք ասել թէ հայերը թրակի-փոխզերէնից անկախ մի ցեղ են, նախապէս բնակուել են թրակիոյ տահմաններում այդ ժողովուրդների հարեւանութեան մէջ, թրակի-փոխզերէն շարժումից առաջ, կամ հենց զրա պատճառով թրակիայից անցել են Փոքր-Ասիա, իրենց յետաձգեց մասերը չփոխան մէջ են եղել փոխզերէնի հետ և թրակեւս ընդունել են նրանց լեզուն, բայց բուն յառաջընթաց մասը՝ որ վերջապէս եկել հաստատուել է Հայաստանում, որ և է կապ չունի նրանց հետ:

Հայոց հայերէնիքը թրակիա գնելու տեսութիւնը հաստատուում է այժմ բոլորովին մի այլ ճանապարհով, այն է հայոց արեան քննութեամբ: Ահա այս մասին եղած քննութեանց համառօտ ամփոփումը.

Արիւնը բաղկացած է երկու մասից՝ չիճուկ և կարմիր գնդակներ: Երբ ամանի մէջ մի քիչ արիւն հաւաքենք ու պահենք, կը տեսնենք որ քիչ յետոյ նա կը սառչի և երկու մասի կը բաժանուի: Տակին կը նստի հաստատուն մասը, որ կարմիր գնդակներն են, երեսին կը մնայ գեղնորակ մի ջուր որ չիճուկն է:

Երբ երկու տարբեր անձերի արիւնը խառնենք իրար հետ, հետեւալ տարօրինակ երևոյթը կը նկատենք: Ոմանց չիճուկն ու կարմիր գնդակները միասին մէջ անվթար կը մնան, այսինքն երկու արիւնները նոյնա-

տեսակ են, Կարիշները չիճուկը լուծում է միսը կարմիր գնդակները. կամ չիճուկը լուծիչ է, իսկ կարմիր գնդակները լուծական են. և կամ չիճուկը լուծիչ է, իսկ կարմիր գնդակները անլուծական:

Գիտունները քննել և գտել են որ արեան գնդակների այս լուծական կամ անլուծական լինելու չափը ինչպէս անհատից անհատ, նոյնպէս և ազգից ազգ տարբերւում է: Վերածելով լուծականութիւնը չորս խմբի, անհ թէ իւրաքանչիւր ազգ ինչ տոկոս է ներկայացնում:

Յեղային յատկանիշ է կոչւում այն թիւը որ տալու է ա և գ խմբերի գումարը բաժանելով բ և գ խմբերի գումարով:

	ա	բ	գ	դ	ցեղային յատկանիշ
Անգլիացի	43,4	7,2	3	46,4	4,5
Ֆրանսիացի	42,6	11,2	3	43,2	3,2
Գերմանացի	47,3	11,3	5,7	36	3,1
Ամերիկացի	40	7	10	43	2,9
Իսպացի	38	11	3,8	47,2	2,8
Աւստրիացի	40	10	8	42	2,6
Չեխոսլովակ	40	12,4	7,8	39,2	2,6
Բուլգար	40,6	14,2	6,2	39	2,3
Սերբիացի	41,8	15,6	4,6	38	2,29
Յոյն	41,6	15,2	4	38,2	2,25
Ռումինացի	40,93	14,54	7,97	36,55	2,17
Հայ	40,3	16,6	6,8	36,3	2,01
Թուրք	38	18,6	6,6	36,8	1,77
Հունգարացի	38	18,8	12,6	31	1,6
Լեհ	37	20,8	9,5	32,5	1,55
Աւար	32,4	19	5	43,0	1,55
Հրեայ սլավ.	33	23,7	5	38,8	1,3
Ռուս	31,2	21,8	6,3	40,7	1,3
Չինացի	25	34	10	30	0,8
Անճամցի	22	28,4	7,2	42	0,8
Հնդիկ	19	41,2	8,5	31,3	0,5

Համեմատութիւններից երևում է որ ա խմբի տոկոսը բարձր է եւրոպայում, աստիճանաբար նուազում է յառաջանալով դէպի արեւելք՝ Ասիա և Աֆրիկէ, որոնց մէջ բ խմբի տոկոսն է գերակշռում, հետեւաբար որ և է ժողովուրդի ա տոկոսը որքան բարձր լինի, այնքան նա մօտ է եւրոպականին: Նմանապէս ցեղային յատկանիշը եւրոպայում 2-ից բարձր է, իսկ Պոլսից դէպի արեւելք հետզհետէ իջնում է: Հունգարացիք թէև եւրոպաբնակ, բայց լինելով ծագմամբ ուլրոֆիննական ժողովուրդ, իրաւամբ ունին 2-ից ցածր յայտանիշ:

Եթէ այժմ առնենք հայոց տոկոսները,

կր տեսնենք որ հայերը գտնւում են եւրոպական ժողովուրդների մէջ եւ իրենց տոկոսը նոյնիսկ աւելի բարձր է քան լեհերի և սլոնների տոկոսները: Մեր ազգային յայտանիշը ցոյց է տալիս որ մեր տեղը գտնւում է Պոլսից դէպի արեւմուտք, Բալկանեան ժողովուրդների կողքին, այն է լեզուաբանութեան ակնարկած Թրակիան: Փոխզական հարցից շատ աւելի ղրժար է Փոքր-Ասիական միւս լեզուների հարցը, քանի որ այդ լեզուներից շատ աւելի քիչ բան գիտենք կամ նոյնիսկ ոչինչ չգիտենք:

Կապաղովկացոց լեզուի համար մի հետաքրքրական աշխատութիւն ունի Կարոլիզո, Եփեսոսարիոն Սիւնկիրտիկոն ելլենու կապաղովկիկոն լեքսէոն, Չմիւսնիա, 1885: Այս աշխատութեան մէջ հնդկնակը հաւաքում է այն բոլոր բառերը, որոնք գործածական են կապաղովկիոյ արդի յունաց բարբառում, բայց յունարէն չեն և ենթադրում է որ դրանք հին կապաղովկացերէնի մնացորդներն են: Արդ՝ այս բառերը բոլորովին նոյն են հայերէնի հետ. ինչպէս՝ կալակոնի = գայլիկոն, պիյախի = փայծախ, մարուկիա = մօրուք, մուզիա = մողի, պազարցի = բաղարջ և այլն: Սակայն այս բառերը հայերէնից փոխառութիւն են ըստ իս և այն էլ ուշ ժամանակի փոխառութիւն, քանի որ յետին ձայնաշարջութեան համեմատ են. հմմտ. յատկապէս պաղարծի, ուր պ-բ, գ-դ և ց-ջ: Սրանից հետեւում է որ յիշեալ բառերը չեն կարող ապացուցանել ո՛չ կապաղովկացերէնի հնդեւրոպական լինելը և ո՛չ էլ հայերէնի հետ ցեղակցութիւնը:

Ամենից աւելի աղմուկ հանեց զիտական աշխարհում հաթեան-հայկական հարցը: Ենտէն իր բոլոր արդիւնքները համաձայն դուրս բերելով հայ լեզուաբանութեան տոեւալների և ձայնական օրէնքների հետ՝ դրանով իր տեսութիւնը ընդունելի ընծայեց բոլորին: Հիւրըման թէ և չէր արտայայտուած հրապարակաւ, բայց համամիտ էր Ենտէնի: Տաշեան իր Ուսումն Դաւական Հայերէն Լեզուի աշխատութեան մէջ համամիտ և պաշտպան դուրս եկաւ: Մեր երկրորդական գրողները, որոնց թւում և տողերիս գրողը, յախճառն յափշտակութեամբ ընդունեցին նոր տեսութիւնը, հա-

կառակ այն հանգամանքին, որ ինչպէս Մելլէ տուած է, գտնուած նիւթը բաւական չէր վճռելու հայերէնի ցեղակցութեան հարցը, և առ առաւելն կարող էր ցոյց տալ որ հաթերէնը հնդկերոպական լեզու է:

Բոլորովին նոր և անսպասելի յայտնութիւններ դուրս եկան վերջերս: 1906 թուին Հուգօ Վինքլէր գերմանացի գիտունը պեղումներ կատարեց հաթերի Հաթթուշա մայրաքաղաքի աւերակներում (այժմ Բուզազէձ, Անգորայից 145 կիլոմետր արեւելք) և գտաւ հաթեան թագաւորների պալատը, հաթեան մեծագոյն աստուծոյ մեհանք, մի մատենադարան՝ որ հիմնուել է Ն.Ք. 1300 թուին և յետոյ դարձել հաթեան պետական արխիւ: Այս բոլորի մէջ երեան եկան մեծ քանակութեամբ, մինչև 10,000 կտոր թրծուն կաւէ տախտակներ, ծածկուած արձանագրութեամբ: Ամէն մի տախտակի երկու երեսը գրուած է և ունի 40-80 և մինչև 120 տող. գրանից հասկացում է թէ ինչպիսի՜ մեծ նիւթ է երեւան հանուած հաթական պատմութեան համար:

Պրագայի համալսարանի չեխ պրոֆ. Հրոզնիի ձեռնարկից լսածել հանկուկը: Բաբերայտաբար արձանագրութիւնները գրուած էին ո՛չ թէ հաթական պատկերապիր անձանթի գրութեամբ, այլ ասորեստների բնագրերով, ուստի և առաջին անգամից հեշտութեամբ կարգացուցին: Ինչ վերաբերում է գրուածքի խմատը հասկանալուն կամ թարգմանելուն, այստեղ մեծագոյն օգնութիւնը մատուցին զաղափարագրերը և հաթեան սուրբ-աքաղաքէն մի բնաւան՝ որ գտնուել էր նոյն արխիւում:

Հրոզնին տուած է, որ ինքը ուրիշ շատերի նման նախապէս արամագրուած էր գտնելու ոչ-հնդկերոպական մի լեզու. բայց իր սպասածի բոլորովին հակառակը դուրս եկաւ:

Մի լեզու, որտեղ վաղաք նշանակում է ջուր, կուիւ նշանակում է որը, և կուիւ նրա չեզոքն է, մի լեզու՝ որտեղ բայը խոնարհում է եամի, եասի, եազի և այլն, չի կարող հնդկերոպական չլինել: Հրոզնին անցաւ Պոլիս և 5 ամիս աշխատելով թանգարանում պահուած քարերի վրայ, ման-

րակրկիտ քննութեան ենթարկելով ամէն մի բառ, գտած ու վերլուծած ամէն մի գաղտնիքը հազարաւոր օրինակներով ու վկայութիւններով հաստատելուց յետոյ, վերջապէս բոլորովին վստահ իր գիւտի վերայ, համարձակուեց հազորգել գիտական աշխարհին: Իր այս առաջին յայտարարութիւնը հրատարակեց 1915 թ. Դեկտեմբերին, որին հետեց Իի Շպրայսի դեռ հեքիք ստուար աշխատութիւնը, որ հաթեան լեզուի ամբողջ քերականութիւնն ու համառօտ բառարանն է (Լայպցիկ 1917):

Իր գիւտն անելուց յետոյ, իբր փորձ Հրոզնին նկսեց թարգմանել առաջին անգամ 7 մեծ արձանագրութիւն, որոնց իւրաքանչիւրն ունի 150-300 տող, կրօնական ու պատմական բովանդակութեամբ:

Երկու փորձերն էլ չատ յաջող էին, Հրոզնիի վերլուծութիւնը այնպէս ճիշտ էր, որ ոչ միայն նոյնիսկ սկզպակի գիտունների կողմից ընդունելութիւն գտաւ, այլ և նորանոր փաստերով հաստատուեց ու փաւերացուեց: Այսօր բաւական մեծ թիւ են կազմում այն գիտունները, որոնք զբաղւում են հաթերէնով և ունին արդէն զանազան աշխատութիւններ: Յիշենք ի մէջ այլոց Թորրեր, Յոաննէս Թրիգրիս, Իոյէ, Չոմեր ևն. հիմնուեց մի նոր գիտութիւն արեւելքի պատմութեան և յատկապէս հնդկերոպական լեզուաբանութեան մէջ, այն է հաթարանութիւն:

ՊՐՈՖ. Հ. ԱՃՍՈՒՅԱՆ

(Վերջը յաջորդել)